№ 164 ԿԻՐԱԿԻ, 31 ՅՈՒԼԻՍԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 31 ՅՈՒԼԻՍԻ № 164

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Օգոստոսի 1-ից մինչեւ տարվայ վերջը 5 րուբլի:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք է վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торговъ. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ԲԱՑՎՈՒՄ ԵՆ
Կովկասեան Ֆրեբելեան Դասընթացքներ
(ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ)
ՏԵՍ 4-րդ ԵՐԵՍ
(Կ.) տռ. 623. 6—5

Adresse Télégraphique SANITAS
Адресъ телеграммъ САНИТАСЪ Тифлисъ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ
ԱՌԵՒՏՐԻ
ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

Վաճառքի հանվեց սեփական արտադրութիւն բալլինջներ, լուեր և այլ միջատներ սպանող փոշի
„ՍԱՆԻՏԱՐ"
անունով։ «Սանիտարը» ներգործում է մահացու կերպով, արգելք է լինում միջատներին փոխադրել զանազան վարակներ և հաճելի հոտ ունի։
748. 1—1

ФАБРИКИ
А. ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
„ИНТЕЛЛИГЕНТНЫЯ"
ЦѢНА
25 шт. 15 к.
10 ш. 6 к. 100 ш. 60 к.





662. 100—19 (Ե. Հ. Կ.) տռ.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
ԱՄԱՌԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹՆԵՐ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ—սիմֆոնիական լարանուագախումբ եւ պարեր։
ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ—սազանդարներ։
ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ—սիմֆոնիական լարանուագախումբ։
ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ—սինէմատօգրաֆ, սազանդարներ։

Հիւրերը, համաձայն ընդհանուր հիմունքների, մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 ռուբ., կանայք 50 կ., ուսանողները 25 կոպ.։

Երեկոյթների սկիզբը երեկ. ժամը 9-ին։

Երկուշաբթի և ուրբաթ օրերը Մանկական Երեկոյթներ։ Թոյլատրվում են պ. պ. անդամների և կանդիդատների երեխաները՝ երեկոյեան ժամը 6—8-ը։

(Կ.) 659. 0—7

ДЕШЕВО
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ №7

(Ե. Հ. Կ.) տռ. 283. 50—48

ԱՌԱՋԻԿԱՅ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՑ
ՄՈՍԿՎԱՅԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԻՑ
բացվելու է նաև
ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

հայ-լուսաւորչական խմբապետների և երգեցողութեան ուսուցիչների համար, որի ծրագիրը համապատասխանում է Պետերբուրգի պալատական երաժշտական ճեմարանի ծրագրին։ Դասընթացներն աւարտողները ստանալու են պատշաճաւոր վկայականներ՝ խմբապետի և երգեցողութեան ուսուցչի կոչում։ Դասընթացներում աւանդելու են կոնսերվատօրիայի, սինօդական դպրոցի ուսուցիչները և պրօֆեսորները։ Հայկական բաժանմունքը ղեկավարելու համար հրաւիրված է յայտնի երաժիշտ-երգահան ԵՂԻՇԷ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԸ։

Մանրամասնութիւնների համար դիմել՝ г. Москва, Арбатъ, д. № 4. «Регентск. курсы», վերատեսուչ՝ պրօֆեսօր Բազումել Բէքէ։ Աչող ձայն ունեցողները կարող են մասնակցել Մոսկվայի հայոց եկեղեցական երգեիկ խմբում որոշ վարձատրութեամբ։

տռ. (ու. կ.) 745. 2—2

ԲԺԻՇԿ
Ռ. Ս. ԴԱՒԹԵԱՆՑ
Ներքին եւ ջղային հիւանդութիւնների ընդունելութիւնը (ցերեկվայ ժամը 12—1.
ամեն օր (երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կոչուբէեվսկայա փող. № 22.
Ելիզավէտինսկայա փողոցից՝ № 44 տան անկիւն։
(Ե. Հ. Կ.) տռ. 243. 100—49

ԽԱՂԱՂՎՈՒՄ ԵՆ

Վերջին շաբաթներում մենք կանգնած էինք քաղաքական սուր խնդիրների առաջ։

Եւ կային կարծողներ, որ այդ խնդիրները կարող էին մեծ բարդութիւնների և ընդհարումների առիթներ դառնալ։

Արդարև Մարոկկոյի հարցը այնքան սուր բնաւորութիւն էր ստացել, որ ֆրանսիական և գերմանական զինուորական շրջանները լուրջ մտատանջութեան մէջ էին ընկել։ Եւրոպական միւս պետութիւնները երկիւղով հետեւում էին ֆրանս-գերմանական բանակցութիւնների ելքին։

Այժմ նկատվում է վերադարձ դէպի խաղաղ յարաբերութիւնները և այլես վտանգ չէ սպասվում Մարոկկոյի շրջանից։

Միւս հիւանդոտ և սուր խնդիրը՝ ալբանականը, որ ամեն օր կարող էր առիթ ծառայել պատերազմական գործողութիւնների՝ Թիւրքիայի և Չերնօգօրիայի միջև, ստացաւ խաղաղ լուծում։ Թիւրքիան արեց էական զիջումներ և թոյլ տուեց մալիսօրներին պահպանել իրանց արտօնութիւնները, աւելացնելով եղածների վրա և մի քանի նորերը։ Պատերազմի վտանգը այդտեղից էլ վերացաւ։

Մնում է երրորդ սուր քաղաքական հարցը՝ պարսկականը։ Նա թէև շօշափում է եւրոպական պետութիւնների շահերը որոշ չափով, այնուամենայնիւ նա ներկայանում է իբրև ներքին խնդիր։ Շահագրգռված պետութիւնները իրանք ցանկացել են տալ պարսկական ներկայ դէպքերին ներքին գործերի բնաւորութիւն, համարելով նրանց երևոյթներ, որոնք առաջ են եկել երկրի ներքին կեանքի փոփոխութեան հանգամանքներից։

Անշուշտ՝ առաջիկայում գալիք եղելութիւնները շուտով աւելի որոշ արտայայտութիւն կը տան պարսկական դրամային, և կը տեսնենք, թէ ինչ տեսակ հաւասարակշռութեան վրա պէտք է հաստատված լինի պարսկական արդի քաղաքական կեանքը։ Յամենայն դէպս՝ դժուար կարելի է ենթադրել, թէ պարսկական դէպքերը առիթ դառնան խոշոր միջազգային թիւրիմացութիւնների և կամ ընդհարումների։ Շահագրգռված պետութիւնները աշխատել են նախատեսել իրանց բռնելիք դիրքը՝ սպասվող եղելութիւնների վերաբերմամբ։

Ուրիշ նոր քաղաքական բարդութիւններ չը կան ասպարէզում։ Իսկ խաղաղասիրական այն տրամադրութիւնը, որ հանդէս է եկել վերջին շաբաթներում Անգլիայի, Ամերիկայի, Եապօնիայի, Ֆրանսիայի միջև, ցոյց է տալիս, որ ներկայ քաղաքական բոպէներում նօսր են պատերազմասէրների շարքերը։

Բայց պատերազմական պատրաստութիւնները, այնուամենայնիւ, չեն դադարում, այլ օրէ-ցօր աւելի ու աւելի ընդարձակվում և մեծանում են։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
29 յուլիսի

Հռոմ.—Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, պապի առողջութիւնը վատթարացել է։ Ի միջի այլոց, Վատիկանի շրջանները պնդում են, որ պապի ույժերի մեծ չափով թուլանալու տեղեկութիւնը չափազանցված է։ Պապի առողջութիւնը բաւարար է։

Ամստերդամ.—Անցեալ գիշեր մեծ հրդեհ ծագեց նաւահանգստում բամբակի ու բրդի պահեստներում։ Վնասները 4 միլիօն ֆրանկ են։

Բերլին.—Շոգը և երաշտը շարունակվում են։ Դպրոցներում ուսումը հասակաւորների համար դադարեցված է։ Քաղաքային վարչութիւնը խորհուրդ է տալիս ազգաբնակութեանը տնտեսաբար օգտվել ջրից։ Մտադրութիւն կայ փակել քաղաքային շատրուանները և կարճել փողոցների ջրելը։

Օօս.—«Շվաբէն 9» դիրիժաբլը 10 ճանապարհորդներով, բարձրանալով առ. ժամը $6^1/_2$-ին, հասաւ Ֆրանկֆուրտ ժ $10^1/_4$-ին և ժ. 2-ին դիմեց Վիսբադէն, որտեղից վերադարձաւ Օօս ժ. $2^1/_2$-ին ցերեկվայ։

Մայնց.—Վիլհէլմ կայսրի և եապօնական գեներալ Նօգիի ներկայութեամբ կատարվեցին զինուորական վարժութիւններ։

Զագրէբ.—Սօկօլների համասլաւօնական համագումարի դէմ սօցիալ-դեմօկրատները կազմակերպում են ընդհանուր գործադուլ՝ իբրև բողոք ռամիկանութեան գործողութիւնների դէմ։ Կարգ ու կանոնը առայժմ չէ խախտված։

Պարիզ.—Հաւասը հաղորդում է, որ գաղութների մինիստրութեան մէջ չէ հաստատվում առ այժմ լրագրական այն տեղեկութիւնը, թէ թուրքերը գրաւել են Աինգալակկին՝ Բօրկուի շրջանում։

Պրագա.—Բոհեմիայի փոխարքայի կարգադրութեամբ փակվեցին 133 չեխական սօցիալ-դեմօկրատիական կազմակերպութիւններ։

Լվով.—Տեղական լրագիրները դիմում են Էրենտալին՝ պահանջելով յանուն անտառային բարձր ճեմարանի շահերի հանդէս գալ ի պաշտպանութիւն Դօբրօվսկիի, Բարցինսկիի, Սկօվրօնի և Եաշկօվսկիի, որոնք Կիեվում կալանաւորվել են իբրև լրտեսներ։

ԳՈՐԾԱԴՈՒԼ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
29 յուլիսի

Լօնդօն.—Գործադուլ բանուորների թիւը նաւաշինարաններում հասնում է 80,000-ի։

Գործադուլ արին արեւմտեան երկաթուղագծի ապրանքային կայարանների 1400 ծառայողներ։

Լօնդօն.—Գործադուլի հետեւանքները, չը նայած որ կառապանները սկսեցին աշխատել, զգալի են։ Շատ ֆաբրիկաներ չեն աշխատում։ Ազգաբնակութիւնը կարիքի մէջ է։ Համայնքների պալատում պօստերի կառավարիչը յայտնեց, որ կառավարութիւնը ձեռք է առել ամեն տեսակ միջոցներ՝ ապահովելու Լօնդօնի ազգաբնակութեանը ուտելիքի կողմից։

Պետերբուրգ.—Նաւահանգստային բանուորների ներկայացուցիչները համաձայնեցին աշխատանքները անյապաղ վերսկսել։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
29 յուլիսի

Լօնդօն.—Բուռն վիճաբանութիւններից յետոյ, veto-ի իրաւունքի բիլլը լորդերի պալատը ընդունեց 131 ձայնով ընդդէմ 114-ի։ Այդպիսով պառլամենտական ճգնաժամը վերացաւ։

Լօնդօն.—Լորդերի պալատ։ Վիճաբանութիւնները մինչև նիստի վերջը կրում էին ծայրայեղ աղմկալի բնաւորութիւն, բայց և այնպէս կառավարութիւնը յաղթանակը տարաւ շնորհիւ մի քանի եպիսկոպոսների և մի քանի ունիօնիստ պէրերի անսպասելի աջակցութեան, որոնք ձայն տուին յօգուտ կառավարութեան։ Կուլուարները լցրած բազմաթիւ հասարակութիւնը բարձրաձայն ողջունեց Խօլդէնին և Մօրլէյին, երբ սրանք դուրս էին գալիս դահլիճից։ Քուէարկութեան հետևանքները լիբերալ պէրերը ընդունեցին բարձրագոչ աղաղակներով։

Համայնքների պալատում վերին պալատի քուէարկութեան հետևանքի լուրը ընդունվեց մինիստրական կուսակցութեան ծափահարութեամբ։

Համայնքների պալատը 256 ձայնով ընդդէմ 158-ի պալատի անդամների տարեկան ռոճիկը որոշեց 400 ֆունտ։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
29 յուլիսի

Կ. Պօլիս.—Պրիշտինի մօտերը ալբանները յարձակվել են տեղական իշխանութիւնների վրա, որոնք ազատվել են միմիայն շնորհիւ զօրքերի գալստեան։

Արտաքին գործերի մինիստրի պօրտֆէյլը, լուրերին նայած, ստանում է Սօֆիայում պաշտօնավարող դեսպան Ասի-բէյը։

ՖԷԼԻԷՏՕՆ

ԸՆԹԱՑԻԿ ԿԵԱՆՔԻՑ

I

Դիպլոմատը

Դէմ առ դէմ, երկաթուղու վագօնում նստած էր մի պատուաւոր պարսիկ։

Հագուստից երևում էր, որ կամ Դօվլէ է կամ Միւլք։

Նստած ծալապատիկ՝ չափազանց լուրջ հայեացքով պատուհանից դուրս էր նայում։

Որոշեցի ինտերվիւ անել պարսկական ներկայ գործերի մասին։

— Ձերդ արեգակնային ճառագայթութիւնը, արդեօք, երջանիկ Իրանի անդորր հովիտներից է գալիս,—դիմեցի ես բարձրաստիճան ճանապարհորդին։

Նա, պատասխանի տեղ, միրուքը միայն շփեց և գլխով մի ինչ-որ շարժում արեց։

— Դուք, անշուշտ, շահն-շահի սահմանադրական երկրի անմահ մէջլիսի անդամն էք կամ նրա իմաստուն կառավարութեան մի կարևոր պաշտօնեան։

Ճանապարհորդը նորից միրուքը շփեց և գլխով շարժում արեց։

— Ով մեծդ Միւլք և հզօրդ Դօվլէ, կարելի է արդեօք իմանալ, թէ ճիշդ է այն լուրը, որ Մահմէդ-Ալի միրզա էքս-շահը՝ Պարսկաստանի կարօտը քաշելով՝ նորից իր երկիրն է եկել։

Միւլքը նորից միրուքը շփեց և ասաց.

— Ո՞վ է այդ ասում։

— Թերթերը, ձերդ ճառագայթութիւն, թերթերը,—պատասխանեցի ես, ցոյց տալով ծոցումս եղած լրագիրների մի կոյտ։

— Դրանք ռուսական թերթեր են։

— Այո, ձերդ ծիածանափայլութիւն, ռուսական թերթեր են,—պատասխանեցի ես։

— Մի հաւատաք թերթերին։

Ես զարմացայ։

— Ուրեմն ձերդ միւլքային դօվլէութիւնը համոզված է, որ նախկին արեգնափայլ շահը դեռ ևս Եւրոպայումն է գտնվում։

— Իրանի մեր թերթերում այդպէս է գրված. նրանց հաւատացէք,—պատասխանեց ինձ բարձր ճանապարհորդը։

— Բայց չէ՞ որ Թաւրիզում կառավարութիւնը հրամայել է, որ շահի Պարսկաստան գալու մասին թերթերը իրաւունք չունենան բան գրել։

— Չեղած բանի մասին գրելը աւելորդ է։

— Իսկ եթէ, Աստուած մի արասցէ, այդ բանը պատահի, Մահմէդ-Ալի շահը Պարսկաստան վերադառնայ, ինչ կը լինի ձերդ միւլքութեան կարծիքով։

— Ոչինչ. կը կատարվի միայն Աստուծոյ սուրբ կամքը։

— Իսկ ժողովրդի համար դա օգտաւէտ կը լինի։

— Ժողովուրդը Աստուծոյ ստեղծածն է։

— Իսկ դուք, արեգակնաճաճանչ իմաստութիւն, դուք համակրում էք Մահմէդ-Ալի շահին։

— Ես մի չնչին հիւլէ եմ արարչագործութեան մէջ. Իրանը մեծ է և բաղդաւոր՝ թէ ինձնով և թէ առանց ինձ։

— Բայց ես ձեզնից ոչինչ չեմ հասկանում,—բարկացայ ես,—դուք սահմանադրական էք, թէ միապետական։

— Միապետը արեգակի որդին և Իրանի տէրն է. նա է սահմանադրութիւն պարգևողն ու առնողը։

Ես կատաղում էի։

— Զօրք ունէք,—վերջապէս հարցրի ես փոքր ընդմիջումից յետոյ։

— Ամեն մի իրանցի զինուոր է, երբ պէտք է այդ հայրենիքին,—պատասխանեց նա նոյն սառնասրտութեամբ։

— Իսկ զէնք, դրամ, ռազմամթերք ունէք դուք։

— Զէնքը հողից է գոյանում, դրամը՝ աշխատանքից, ռազմամթերքը՝ գիտութիւնից։

— Իսկ Պարսկաստանը ունի հող, աշխատանք, գիտութիւն։

— Մեծ և ընդարձակ են Իրանի սահմանները. նրա որդոց աշխատանքի քրտինքով են ցողված ու ջրված մեր բուրաստանները ու արտերը, իսկ գիտութիւնը 10,000 տարի է, ինչ բուն է դրել Իրանում։

— Ուրեմն դուք պատրաստ էք ամեն տեսակ անակնկալների դէպքում,—հարցրի ես։

— Անակնկալներ չը կան աշխարհիս վրա. միայն մարդիկ են, որ կարճատես են. ույժը իրաւունք չէ, և ոչ էլ իրաւունքը ճշմարտութիւն։

Ես արդէն յուսահատվելու վրա էի, երբ Միւլքը զգուշութեամբ հարցրեց ինձ։

— Թիֆլիսում ռուսը շատ զօրք ունի։

Ես մտածեցի մի խաղ խաղալ բարձրաստիճան Դօվլէի գլխին։

— Ամեն մի ռուսահպատակ՝ զօրք ու զինուոր է, երբ այդ պէտք է հայրենիքին,—պատասխանեցի ես նմանվելով իրան։

Աստրաբադ.—Յուլիսի 27-ին Րէշիդ-ուս-Սալթանէի զօրամասի մի խումբը գրաւեց Թէհրանից չորս արշաւ հեռաւորութեան վրա գտնվող Սենամը։ Րէշիդ-ուս-Սալթանէն՝ Մահմէդ-Ալի շահի կողմնակիցն է։

Լոնդոն.—Համայնքների պալատ։ Գրէյը յայտնեց, որ Ստօկսի նշանակումը չէ խախտում անգլօ-ռուսական համաձայնութիւնը, սակայն Պարսկաստանի հիւսիսային մասի վերաբերութեամբ՝ հակասում է համաձայնութեան ոգուն։ Այդ տեսակէտը Մեծ-Բրիտանիան կընդունէր անշուշտ, եթէ ռուս օֆիցեր, թողնելով Թէհրանում զինւորական գործակալի պաշտօնը, ընտրվէր ժանդարմերիայի կազմակերպիչ դէպի Հնդկաստանը ընկած պարսկական մասում։

Շահրուդ.—Եկան գօկլանները, որոնք գնում են Դամգան՝ Սարդար-Արշադի զօրախմբին օգնելու։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Ալբանական խնդիրը լուծուած

Կ. Պոլիս, 22 յուլիս

Մեծ շունչ մը կառնէ բովանդակ Թիւրքիա մալիսօրներու խնդրոյն լուծմամբ։ Չենք գիտեր ինչ ներշնչման տակ, սակայն բարեբար ազդեցութեան տակ, վերջապէս Բ. Դուռը խոհեմութիւն համարեց զիջում ընել մալիսոր ապստամբներուն և ընդունիլ անոնց առաջարկները ամենամեծ մասամբ։

Ահաւասիկ ընդունուած պայմանները։

Զէնքի խնդիր.—Կառավարութիւնը նախապէս ծանուցած էր թէ միայն հովիւները, անտառապահներն և այդ կարգի անձերը՝ այսինքն իրենց պարտականութեանց բերմամբ զէնքի պէտք ունեցողները պիտի արտօնէ զէնք կրելու։ Ցէտինիէի օսմ. դեսպանը քննութեամբ հաստատած և հոս ծանուցած է, որ Պոդգորիցա գտնուող և Չերնօգօրիա ապաստանած բոլոր մալիսօրները հովիւ, անտառապահ և այլն են, ուստի կառավարութիւնն արտօնեց, որ զէնք կրեն։ Մալիսօրներն իրենց պահանջներուն մէջ ըսած էին, որ զէնքերը չհաւաքուին։

Տուրքի խնդիր.—Երկու տարի պայմանաժամով զերծ պիտի ըլլան ոևէ տուրքէ։ Մալիսօրները հինգ տարի պահանջած էին։

Ետնեալ տուրքերը բոլորովին շնորհուած են։ Մալիսօրներն ալ նոյնը պահանջած էին։

Ոչխարի տուրքը.—Մալիսօրներն յայտարարած էին, թէ իւրաքանչիւր ոչխարի համար մէկ ղրուշ միայն պիտի կրնան վճարել, ինչպէս կըլլայ Չերնօգօրիայի մէջ։ Կառավարութիւնն ալ պատասխանած էր, որ այդ խնդիրը պիտի կարգադրուի պարլամենտին մէջ պատրաստուելիք կանոնագրով մը։ Կառավարութիւնն իր վերջին պատասխանին մէջ ըսաւ, թէ դրացի պետութիւններն իւրաքանչիւր ոչխարէ ինչ որ կառնեն, նոյնը պիտի ըլլայ նաև մալիսօրներուն համար, որով մէկ ղրուշ պիտի առնուի Չերնօգօրիայի մէջ եղածին պէս։

Բայրակդարները.—Մալիսօրները պահանջած էին, որ իրենց բայրակդարները գիւղախումբի միւդիր և ժողովներու անդամ ըլլան։ Կառավարութիւնը ծանոյց, թէ նահանգներու, գաւառներու և գաւառակներու իդարէի ժողովներուն անդամները չեն անուանուիր, այլ կընտրուին, որով բայրակդարներն եթէ ընտրութեանց մէջ մեծամասնութիւն շահին, այդ իրաւունքը պիտի վայելեն։

Տասանորդներու խնդիրը մալիսօրներու պահանջման համաձայն բարւոք կերպով պիտի կարգադրուի։

Ալբանացի պաշտօնատարներ.—Մալիսօրները կը պահանջէին, որ Ալբանիոյ մէջ ծառայելիք պաշտօնատարներն ալբաներէն գիտնան և ալբաներէնն իբրև պաշտօնական լեզու ընդունուի Ալբանիոյ մէջ։ Կառավարութիւնն որոշեց, որ այդ տեղին համար ալբաներէնի հմուտ պաշտօնատարները նախամեծար համարուին։

Ճամբաներու խնդիրը.—Մալիսօրներու այն պահանջումին վրայ, թէ դպրոցներ ու ճամբաներ շինուին, կառավարութիւնն որոշեց, որ ծրագրուած ճամբաներու շինութեան առթիւ Շքոտրայի նահանգին վերաբերողները նախամեծար համարուին։ Ատոր համար հիմակուընէ սահմանուած են պէտք եղած վարկերը։

Զինուորական ծառայութիւն.—Մալիսօրները պահանջած էին, որ զինուորական ծառայութիւնն իրենց երկրին մէջ կատարեն։ Կառավարութիւնն որոշեց, որ երկու տարի Շքոտրայի մէջ ծառայեն և մէկ տարի ալ ի Կ. Պոլիս։

Ընդհանուր ներում.—Կառավարութիւնը, նկատելով որ արդէն ընդհանուր ներման արժանացած են, պէտք չտեսաւ նորէն կրկնելու։

Տեղական հասոյթներ.—Մալիսօրներու այն պահանջումին վրայ, թէ Ալբանիոյ նահանգներուն հասոյթները նոյն տեղերուն յատկացուին, կառավարութիւնը որոշեց, որ անոնցմէ պէտք եղած քանակութիւն մը նոյն տեղերը ծախսուին։

Մալիսօրներու պահանջումէն մէկը միայն նկատի չէ առնուած. այսինքն օտար տէրութեանց մէկին երաշխաւորութիւնը։ Մինիստրական խորհուրդը զէնքի խնդրոյն առթիւ կատարած խորհրդակցութեանց հետեւանքով յարմար չդատեց, որ խուզարկութիւններ տեղի ունենան՝ մալիսօրներու կողմէ լեռներու և իրենց բնակարաններուն մէջ պահուած զէնքերուն համար, ուստի որոշեց զէնքերու խնդրոյն նկատմամբ աչք գոցել։ Խորհուրդը նկատի առաւ վերադարձող մալիսօրներու տրուելիք օրական ուտեստի խնդիրը։ Խորհուրդը տեղեկութիւն ուզեց Կ. Պոլսոյ առևտրական սենեակէն, թէ որքան եգիպտացորեն կարելի է գտնել. պատասխան ստացաւ, թէ ուզածին չափ կրնայ գտնուիլ և թէ Սելանիկի մէջ մեծաքանակ եգիպտացորեն կայ պատրաստ։ Խորհուրդն որոշեց վերադարձողներու իւրաքանչիւրին օրական կէս քիլօ եգիպտացորեն տալ։ Շկոտրայի կուսակալին ալ մասնաւորաբար հեռագրուեցաւ, որ անձամբ ներկայ գտնուի մալիսօրներու վերադարձին առեն և ոևէ բողոքի պատճառ չտայ։

Տրուած գոհացումը, ինչպէս կը տեսնուի, շատ նշանակութեան արժանի է և անհամապատասխան այն յոխորտութեանց, որոնցմով այնքան սոնքացին մեր երիտասարդ-թիւրք վարիչները։ Սակայն կը վախցուի, որ Համիդի պէս ասոնք ալ խաբեն և... չգործադրեն ինչ որ խոստացած են... նեղը մնալով։

Շառայ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

IV

Թիֆլիսի մի խումբ հայեր խնդիրք են ներկայացրել Կ. Պոլսի ազգ. ժողովին, որպէսզի նա շուտափոյթ քննութեան ենթարկէ սրբազան Օրմանեանի դէմ եղած մեղադրանքները և իր վճիռն արձակէ, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ շուտով կաթողիկոսական ընտրութիւններ են լինելու, իսկ սրբազանը թեկնածուներից մէկն է համարվում։

Մենք Օրմանեանի կողմնակիցներից չենք, գուցէ թերևս նրա թեկնածութեան հակառակ եղող անձնաւորութիւններից մէկն ենք, բայց և այնպէս մենք միայն ողջունել կարող ենք Թիֆլիսի մի խումբ հայերի այդ քայլը, որը ցոյց է տալիս, թէ մեր հասարակութեան մէջ դեռևս կան մարդիկ, որոնք կուրօրէն չեն հետևում թայֆայական շրջանների հրահանգներին, այլ կամենում են ինքնակամ գործել, և գործել իրանց ձեռքին փաստեր ունենալով։

Կ. Պոլսի ազգ. ժողովը, որ մի պատկառելի հիմնարկութիւն է համարվում, ահա 2 տարի է՝ ինչ ձգձգում է անյայտ պատճառներով այդ դատը, և Օրմանեանը մինչև այժմ էլ մեղադրանքի տակ է։ Ճշմարիտ են թէ սուտ այդ մեղադրանքները, արդար է թէ մեղաւոր Օրմանեանը, դա ուրիշ հարց է, և մենք նրա քննութեան մէջ չենք մտնում. սակայն ամբողջ 2 տարի մարդուն մեղադրանքների տարափի տակ պահել, քննութեան չենթարկել նրա դատը և որևէ վճիռ արձակել՝ դա բիւրօկրատիական ռէժիմի դատաստանական հիմնարկութիւններին յատուկ մի գործ է և ոչ թէ ազգ. սահմանադրական մի հիմնարկութեան. մանաւանդ երբ այդ մեղադրանքները բարդվում են այնպիսի մի մարդու գլխին, որը հասարակական շատ խոշոր դիրք ունի գրաւած և այս բոպէիս կաթողիկոսական թեկնածուներից մէկն է համարվում հասարակութեան որոշ խաւերի կողմից։

Ասում եմ, որ Թիֆլիսի մի խումբ հայերի վերոյիշեալ խնդիրքը միայն ողջունել կարելի է, և ամենքի, մանաւանդ մեր լրագրութեան, պարտականութիւնն է ջերմ պաշտպանել այդ խնդիրքը և պահանջել ազգ. ժողովից՝ որքան կարելի է շուտափոյթ քննութիւն նշանակել Օրմանեանի վրա բարդված մեղադրանքները քննելու համար։ Այդ են պահանջում ազնւութիւնը և շիտակութիւնը և ոչ թէ, ինչպէս խորհուրդ են տալիս մամուլի որոշ օրգաններ, սպասել, մինչև որ ինքը ազգ. ժողովը կը բարեհաճէ քննութիւն նշանակել, երբ ինքը կամենայ։

Կ. Պոլսի ազգ. ժողովը մի հասարակական հիմնարկութիւն է, և հայ հասարակութիւնը կատարեալ իրաւունք ունի սպասելու նրանից իր պահանջների իրագործումը, երբ մանաւանդ այդ պահանջները դուրս չեն գալիս օրէնքի սահմաններից։

Ազգ. ժողովը և Օրմանեանի հակառակորդները շատ լաւ պէտք է հասկանան, որ այդ դատի ձգձգումը, յապաղումը նրա կողմնակիցները կարող են և իրաւունք էլ ունեն ուրիշ կերպ հասկանալու և ազգ. ժողովին համարելով Օրմանեանի հակառակորդ՝ կարող են ասել, որ նա դիտմամբ է ձգձգում դատը, որպէսզի կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ Օրմանեանը, դատի տակ լինելով, հնարաւորութիւն չը լինի նրա թեկնածութիւնը դնելու։

Ասում եմ, որ ամեն ոք իրաւունք ունի այդպէս հասկանալու, և ահա այդ պատճառով նոյնիսկ մենք, Օրմանեանի հակառակորդներս էլ, բարոյապէս պարտաւոր ենք ամեն կերպ պահանջելու ազգ. ժողովից, որ սա անմիջապէս քննէ Օրմանեանի դէմ եղող մեղադրանքները և իր վճիռն արձակէ։

Այն ժամանակ միայն, պարզված ճշմարտութեան առաջ, մենք կարող ենք բաց ճակատով կանգնել և ասել՝ կարելի՞ է արդեօք Օրմանեանի թեկնածութիւնը դնել թէ՞ ոչ։

Ամեն տեղ և ամեն հանգամանքներում հակառակորդի հետ պէտք է կռւել ազնիւ զէնքերով և ոչ թէ խորտ ու բորտ և դատապարտելի ճանապարհներով։

Այսպէս է պահանջում ազնւութիւնը։

Վ. Թումանեան

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՉԻ ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔԵՍՏԱՆՈՒՄ

I

Հայ միտքը, կարծես թէ, ուզում է արթնանալ և կենդանութեան նշաններ ցոյց տալ։ Ամեն կողմից գրում, ճառում են «արդէն իսկ հասունացած խնդիրներից», և իւրաքանչիւր ոք տքնում է որևէ մի առաջարկ դնել հրապարակի վրա, թէկուզ ինչ առաջարկ ուզում է լինի, միայն թէ խօսվի ցանկալի հարցի շուրջը։

Այսպէս՝ վերջերս մամուլի մէջ լոյս տեսան մի քանի յօդուածներ, որոնց հեղինակները տենչում են Թուրքեստանում թեմ. տեսուչ ունենալ։ Եւ յօդուածագիրները յանուն դպրոցի առաջադիմութեան, յանուն կրթական գործի բարելաւման անում են այնպիսի անգործնական առաջարկներ, որոնք դպրոցը կարող են միայն պատահական հովերի խաղալիք դարձնել և տալ այդ հիմնարկութիւնները այնպիսի անձնաւորութիւնների ձեռքը, որոնք շատ քիչ առընչութիւն ունեն կրթական-դաստիարակչական գործի հետ։

Քննենք այդ առաջարկներն ըստ էութեան և տեսնենք, թէ ո՛ր չափով անհեթեթ ու անիրագործելի են դրանք։

Յօդուածագիրներից մէկը առաջարկում է, որ Թուրքեստանի բոլոր 10 դպրոցներն անխտիր տարեկան 120-ական ր. յատկացնեն թեմ. տեսչի համար. այդպիսով կը ստացվի տարեկան 1,200 ր. մի գումար, որով թէև հնարաւոր չի լինի մասնագէտ-մանկավարժ թեմ. տեսուչ ունենալ, սակայն 800 րուբլով կարելի կը լինի հրաւիրել այդ պաշտօնի համար շրջանի քահանաներից մէկին, 400 ր. էլ յատկացնելով նրան իբրև ճանապարհածախս։ Ահա մի առաջարկ, որով յօդուածագիրը նպատակ ունի բարեկարգել Թուրքեստանի դպրոցները։

Ընթերցողներին սխալմունքներից հեռու պահելու համար՝ նախ կարևոր ենք համարում ասել, որ Թուրքեստանը չէ կարող իր սեփական թեմ. տեսուչն ունենալ, որովհետև նա առանձին թեմ չէ կազմում, այլ մտնում է Աստրախանի լայնածաւալ թեմի մէջ։ Թուրքեստանը կարող է ունենալ միայն իր շրջանային տեսուչը և կամ միւս շրջանների հետ միասին ունենալ Աստրախանի թեմ. տեսուչը, որը իր հերթին կը յաճախի նաև Թուրքեստան։

Վերջին նպատակով դեռ նախանցեալ տարի թեմ. առաջնորդը մի շրջաբերականով դիմել էր թեմի և մասնաւորապէս Թուրքեստանի դպրոցներին, առնելով նրանց համաձայնութիւնը թեմ. տեսչի համար։ Այդ խնդիրը մինչև այսօր էլ մնում է իր նախնական անորոշ կացութեան մէջ։

Մեր կարծիքով, ոչ Աստրախանի թեմը և ոչ էլ Թուրքեստանի շրջանը չեն կարող և չը պէտք է ունենան իրանց թեմ. կամ շրջանային տեսուչները, քանի դեռ Աստրախանի թեմը չունի իր թեմ. խորհուրդը, այն էլ այնպիսի մի խորհուրդ, որ աչալուրջ և եռանդով հսկէր թեմի բոլոր դպրոցների վրա, այլապէս՝ առանց թեմ. խորհրդի՝ տեսուչների գործունէութեան արդիւնքը իջնում է իր մինիմալ աստիճանին և զէրօյի հասնում, շատ անգամ մինչև իսկ բացասական հետևանքներ առաջ բերում, որովհետև այն կօնտրօլը, որից ճառում են յօդուածագիրները, բացակայում է աւելի մեծ չափով թեմ. տեսչի գլխից և երկրորդ՝ առանց թեմ. խորհրդի՝ թեմ. տեսչի որոշումները իրաւական ոյժ, սանկցիա չեն ստանում, հետևապէս մնում են իբրև մեռած տառ. իսկ բարոյական ոյժի մասին, օ՜հ, ծիծաղելի կը լինի խօսել, երբ անձնական կրքերն ու վրէժխնդրութեան ցած հակումները խոր արմատներ են ձգել... մարդկանց հոգիներում։

Այսպէս՝ ուշադրութեամբ կարդալով վերջերս այս հարցի մասին լոյս տեսած յօդուածներից մէկում ասվածները, կը տեսնենք հետևեալ անարդար որոշումը, որ յօդուածագիրն ուզում է փաթաթել անխտիր բոլոր դպրոցների գլխին։ Մեր կարծիքով, միանգամայն անիրաւացի կը լինի Դզըլ-Արվադի, Չարջույի, Քերքիի և այլն աղքատ դպրոցներից, որոնց տարեկան բիւջէն 1200—1500 ր. է հասնում, պահանջել, որ նրանք էլ տարեկան 120-ական ր. տան թեմ. տեսչի պահպանման համար այնպիսի դպրոցների հետ, որոնց տարեկան բիւջէն 3,000—5,000 ր. է հասնում։ Այս ձևով երբէք չի հաւաքվի այն 1,200 ր., որի համար երազում է յիշեալ յօդուագիրը։

Ընդունենք, սակայն, որ պատրաստ է այդ գումարը։ Եւ սակայն յօդուածագրի առաջարկը—թեմ. տեսուչ հրաւիրել Թուրքեստանում պաշտօնավարող որևէ քահանայի—մեր իրականութեանը համապատասխան չէ, որովհետև այդպիսի մի թեմ. տեսուչ շատ քիչ կապ կունենայ դպրոցի հետ, շնորհիւ այն հանգամանքի, որ նա, ի պաշտօնէ, ծիսակատարութիւններից աչք բանալու ժամանակ չի ունենայ, մանաւանդ որ, միւս կողմից, ներկայումս իրաւացի բողոքներ են լսվում քահանաներին դպրոցներում դասեր տալու դէմ։

Որ քահանան պրոֆէսիօնալ ուսուցիչ չէ, այդ շատ պարզ է. որ դպրոցներում տեղ պիտի ունենան միայն և միայն պրոֆէսիօնալ ուսուցիչները, այդ էլ շատ հասկանալի է։ Հետևապէս անմտութիւն կը լինէր պաշտպանել մի քահանայի թեկնածութիւն, այն էլ թեմ. տեսչութեան համար, երբ նրա ուսերին միաժամանակ ծանրանալու է թէ քահանայագործութիւնը և թէ թեմ. տեսչութեան պաշտօնը։

Թղթակիցներից մի աւելի խելօքը անում է առաջարկներից գերագոյնը, որով ոչ միայն կրթական, այլ և «հասարակական կեանքը կը վերակենդանանայ և—օ՜ ուրախութիւն — համայն Թուրքեստանին կը տիրէ ոգևորութիւն, հիասթափված և մի կողմ քաշված ազնիւ անձինք հրապարակ կելնեն», և, խօսք չը կայ, բազմաչարչար հայ ժողովուրդն ու մեր չքաւոր դպրոցները վերջ ի վերջոյ հանգիստ շունչ կը քաշեն։

Ըստ այդ վերջին յօդուածագրի, Թուրքեստանի հայերի վերածնիչը պիտի հանդիսանայ այն վարդապետը, որ երեք ազդու գործօններ պիտի ամփոփէ իր մէջ. նա պէտք է լինի և կենտրօնական գործակալ և շրջիկ քարոզիչ և... թեմ. տեսուչ։

Կենտրօնական գործակալ, շրջիկ քարոզիչ և թեմ. տեսուչ։ Բայց ինչ է նշանակում կենտրօնական գործակալ։ Մենք գիտենք, որ Ախալքալաքում, օրինակ, գոյութիւն ունի գործակալ քահանայ. բայց Թուրքեստանում կենտրօնական գործակալ՝ մեր ուղեղին անմատչելի է։

Ա՜յ, օրինակ, շրջիկ քարոզիչ՝ հասկանալի է։ Բայց չէ՞ որ «ճարտար ու համոզկեր լեզու ունենալ, սառած ու ընդարմացած հասարակութեան կապել դպրոցի հետ»՝ դեռ չէ նշանակում թեմ. տեսուչ լինել, դաստիարակչական դասաւանդման խնդիրների սահմանը ոտք կոխել և առաջնորդ հանդիսանալ մանկավարժական խորհուրդների, մանաւանդ մենք գիտենք, որ մեր իրականութեան մէջ գրեթէ չը կան այնպիսի վարդապետներ, որոնք երկու ֆունկցիաները—շրջիկ քարոզչութիւն և մանկավարժութիւն—միացնէին իրանց մէջ։

Չէ՞ որ կրթական-հասարակական կեանքը չարչու այն գլրոցը չէ, ուր կարելի լինի լցնել ամեն տեսակի մանր ու մունր իրեր։

Այս խնդիրները պարզելուց յետոյ մեզ մնում է անել միակ գործնական և հերթա-

ԼԵՌՆԵՐՈՒՄ

Քո բարձր փէշերի վրա մակաղած ոչխարների հետ ամառը քուն եմ մտել, և հովւի սրնգի հետ լսել աղբիւրների կարկաջը, ու երբ աստղերը փայլել են, ես երգել եմ քո գովքը հայրենի բնութեան մէջ։

Բարձր ու սիրուն ամպերի մէջ ես խրվել, և որովհետև սպիտակ չալմայով գլուխդ փաթթել ես, ապա յարգանքի նշոյլ ես ծնեցրել իմ մէջ։

Դեռ մանկութիւնից ես գիտեմ պաշտել քեզ, այն ժամանակվանից, երբ ծերացած աչքերդ կկոցված չէին, և մարգերիդ վրա գառն ու մաքին էին պարում։

Եւ այժմ դու դարձեալ նոյնն ես, նոյն բարձր ու ալևոր հսկան ամպերի կէս մութ խաւարի մէջ, բայց ես փոխվել եմ, և շատ եմ փոխվել ակամայից։

Ու երբ այսօր դէպի քեզ եմ դառնում, զգում եմ, որ մի բան եմ կորցրել քեզնից, մի բան, որ քեզնից ստացել եմ, և որը բռնկվելու մօտ է խենթ ու խելառ կրծքիս տակ։

Եւ այդ սէրն է, որ այսօր բերել եմ քո սեղանի վրա դնելու, ո՜վ լեռնային շղթայ, որովհետև ազատութիւնը քո անկախութեան պէս առաջին անգամ դու ինձ ուսուցիր, և գաղաններին հաւասարապէս քո մէջ բնակվելու առաջին օրինակը տուիր։

Եւ որովհետև քամիների հետ յաւերժականը դու ես, ապա ուրեմն դու ես և ճշմարտութիւնը, որովհետև քո մէջ մարդկային ոչինչ չը կայ։

Ա. Ջանեան

— Իսկ ձեր հայրենիքը քանի՞ մարդ ունի,—դարձաւ ինձ Միւլքը։

— Անչափ և անհամար են ծովերի աւազները, իսկ անտառներում բուսած ծառերի տերևները դեռ ես ոչ ոք չէ համարել։

Միւլքս անհամբեր շարժումներ էր անում։

— Իսկ Իրանի մասին էլի ինչ են գրում ռուս թերթերում,—հարցրեց նա, ցոյց տալով ծոցիս լրագիրները։

— Թուղթը լեզու չունի, իսկ մուրը՝ դատողութիւն. դրանց ոգի է տալիս մարդու գրիչը, իսկ մարդիկ զանազան են լինում։

խօսակիցս, երևում էր որ, սկսում էր բարկանալ։

— Ո՞րտեղ է այժմ Մահմէդ-Ալի շահը,—դարձաւ նա ինձ, աչքերը չռելով վրաս։

Ես չը վախեցայ։

— Աշխարհը մեծ է և կլոր, իսկ շահերը փող շատ ունեն. ո՞վ գիտէ, այսօր այստեղ, վաղը՝ մի այլ տեղ։

Խօսակիցս զգաց, որ ես մի խաղ եմ խաղում նրա գլխին, և, մօտենալով ականջիս, ասաց.

— Հասկացանք միմեանց, իմաստուն ես դու։ Դէ իմացիր, բայց լռիր. ես Իրանի ներկայ կառավարութեան մինիստրն եմ և... և փախչում եմ Իրանից...

Երկուսս էլ ծիծաղեցինք։

Գնացքը կանգ առաւ, ես վերցրի իրեղէններս և դուրս եկայ։

— «Արի և Պարսկաստանից մի բան հասկացիր»,—անցաւ մտքովս...

II

Շոգերի այցելութիւնը

Բաժանվելով իր հայրենիքից փախչող Պարսկաստանի իմաստուն մինիստրից, ես ձեռք առայ «Սուրհանդակի» 354-դ համարը և ցանկացայ իմանալ՝ շոգ է Թիֆլիսում թէ հով։ Եւ երբ լրագիրը աչքով անցրի, համոզվեցի, որ անտանելի շոգեր պէտք է լինեն այնտեղ։

Իսկ այդ եզրակացութիւններ անելու համար ես ձեռքիս տակ ունեմ բազմաթիւ փաստեր։

Նախ և առաջ ես կարդացի հետևեալը.

«Զէնքերի խուզարկութիւն.—Ոստիկանութիւնը սկսել է խուզարկել մասնաւոր անձանց զէնքերը»։

Ոչինչ չը հասկացայ, և երբ ռուսերէն թերթն առայ ձեռքս և կարդացի՝ «Полиція конфисковала оружія», նոր միայն գլխի ընկայ, որ զէնքերը գրաւվել են։ Եւ երբ միւս երեսում կարդացի՝ «Չը նայած այն բանին, որ սպիտակեղէնի և թղթի տրամադրութիւնը ուժեղ է» դարձուածքը, իսկոյն իմացայ, որ շոգը Թիֆլիսում 28 աստիճանի է հասել. բայց երբ մի քանի սիւնակ յետոյ կարդացի՝ «Թունաւորվեց դերասանուհի Ֆիլիպենկօ, 19 տարեկան հասակում, ինքնասպանութեան պատճառը սովմահ չը լինելն է», նոր միայն իմացայ, որ «Սուրհանդակի» խմբագրատան մէջ ջերմութիւնը հասած կը լինի առնուազը այն աստիճանին, երբ շոգից Սենայում ձկները կոտորվում են։ Սակայն, ո՜վ սարսափ, երբ աչքս առաւ նոյն թերթի № 356-ում «Շոգեր» վերնագիրը կրող յօդուածին և կարդացի՝ «Եղանակը, որից յետոյ, կը լաւանայ և նորից կը տաքանայ։ Արեգակի մեծ ճնշողութեան շրջանը ընկնում է կենտրօնական Ռուսաստանում, որը շուտով կը տեղափոխվի Վոլգայի միջին տարածութիւնը», մտածեցի՝—խեղճ «Սուրհանդակ», մի՞թէ այսպիսի վախճանով պիտի կնքէիր քո կեանքը. Թիֆլիսի շոգերը խելագարեցրել են բոլորին...

Այստեղ արդէն արտասուքս խեղդեց ինձ, և ես վճռեցի այլ ես չը մտնել Թիֆլիս, այլ կայարանից ուղարկել մի ցաւակցական հեռագիր միայն և այն էլ չորս լեզուներով, որպէսզի եթէ մէկը աղաւաղվէր, միւսը գար պարզելու առաջինին, երրորդը՝ երկրորդին, չորրորդը՝ երրորդին։

Բայց այդ էլ չօգնեց։ Չորս լեզուներն էլ «Սուրհանդակի» հայերէնում աղաւաղված էին...

Մի քանի օրից Թիֆլիս գալով տեսայ, որ եղանակները զով են ու տանելի։

— Նար-Դոսը Ղարաքիլիսայումն է,—ասացին ինձ։

Հանելուկը պարզվեց։

Անխիղճ Նար-Դոս...

Սալ-Ման

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԱՂՈՒՄՆ

Զանգակները ղօղանջում էին մեղմ, տըխուր...

Լուռ էր. ու այդ սրտմաշուկ ղօղանջն էր միայն տարածվում շրջակայքում, գնում հեռու, դէպի անհունը, ու մեռնում։

Զանգակները տխուր ղօղանջում ու արցունքոտ աչքերով Թաղումի երգն էին երգում։

Ու վշտի, տառապանքի այդ աղեկտուր հառաչները պարուրում էին սիրտը և խոցոտում նրան՝ որպէս սուր ասեղներ։

Եւ արիւնոտ սիրտը ընկած ողբում էր իր բերկրութեան, իր անհուն երջանկութեան անդառնալի կորուստը։

Ու այսօր, այս պայծառ ու խաղաղ առաւօտ, նրա Թաղումն էր, և անյագ հողը լայն բացած երախը սպասում էր...

Օ՜, անդարձ կորուստը երջանկութեան, սրտի յաւիտենական բաժանումը...

Ա՜խ, սարսափելի է, սոսկալի...

Չը կայ, էլ չը կայ նա, նա, որի միայն հայեացքը անմահութեան դրախտի դռներն էր բաց անում սրտի առաջ։

Այսօր նրա Թաղումն էր ու զանգակների մելամաղձոտ ղօղանջիւնից պարթած բնութիւնը ծունկի իջաւ նրա դագաղի առաջ, իր վերջին հրաժեշտը տալու։

Ու կարմիր, փարթամ վարդը, մեխակը, շուշանը, անմոռուկը սիրով փաթթված, գրկած միմեանց, պարուրել են նրա խոհերով լի ճակատը յաւիտենական կեանքի պսակով, իսկ լացող ուռենին խոնարհուած նրա թարմ թմբին կամացուկ արցունք է թափում ու զովիկ զեփիւռից օրօրվելով՝ յաւիտենական ննջի երգն է մրմնջում։

Ու սիրտը, արիւնոտուած, վիրաւոր սիրտը, ընկած՝ խոնաւ շիրմին, լուռ, անձայն հառաչում է, հառաչում, հառաչում։

Արշալոյս Տէր-Յովհաննեան

կան առաջարկը, այն է՝ ձգտել օր առաջ Թեմ․ խորհուրդ ունենալ, որը մանրազննին քննելով Թեմի կարիքները՝ իր հերթին կաշխատէ շուտափոյթ լուծումն տալ Թեմ․ տեսուչների այդքան ծանրակշիռ և մեծ կարևորութիւն ունեցող խնդրին։

Գ․ Հայկունի

(Վերջը միւս անգամ)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Քառաձայն խումբ ունենալու ցանկութիւն

Մանգլիս, 29 յուլիսի

Մանգլիսի նման առաջնակարգ ամարանոցի հայոց եկեղեցին մինչև օրս էլ զուրկ է կանոնաւոր քառաձայն երգեցիկ խմբից, չը նայած որ ժողովուրդը բազմիցս իր շրջանում խորհրդակցութեան առարկայ է դարձրել խումբ ունենալու անյետաձգելի խնդիրը։ Վերջերս, սակայն, այդ հարցը գլուխ է բարձրացրել, և յոյս կայ, որ շատ շուտով լուծումն կը ստանայ։

Քառաձայն խումբ ունենալով, եկեղեցին զգալի օգուտ կարող է գտնել թէ նիւթական և թէ բարոյական տեսակէտից։

Տեղիս ծխատէր Անդրիաս ք․ Արշակունին ձեռնամուխ է եղել գլուխ բերելու այդ բարեզարդութեան խնդիրը։ Տեղիս բարեպաշտ և ապահովված ամարողները խոստացել են խմբի բոլոր հարկաւոր ծախսերը հոգալ կամաւոր նուիրաբերութիւն սահմանելով հայ ընտանիքների շրջաններում։

Այս առիթով ծխատէր քահանան բանակցութիւն է սկսել Կօջօրի խմբապետ Բ․ Բերինեանի հետ։ Երաժշտասէր

Քաղաքագլխի և քաղ․ վարչ․ ընտրութիւնը

Բաթում, 29 յուլիս

Ամսիս 28-ին, երեկոյեան ժամը 8-ից, մեծ բազմութիւն էր հաւաքված քաղ․ տան առաջ ու մէջը․ հաւաքված էին իրաւասուները․ պիտի կատարվէին քաղաքագլխի և վարչութեան անդամների ու քարտուղարի ընտրութիւնները։

Նոր իրաւասուներն իրանց ընտրվելուց առաջ խիստ տաք-տաք խօսում էին քաղ․ ինքնավարութեան պրէզիդիումը հիմնովին նորելու անհրաժեշտութեան մասին, խոստանում էին կենդանութիւն մտցնել․ քաղաքի մէջ բերնէ-բերան պտտող բոլոր կասկածները հիմք անելով, խիստ և անաչառ քննութեան ենթարկել ուպրավայի գործունէութիւնն ու դրամական հաշիւները։

Ընտրվելուց, հաստատվելուց և երդումն ընդունելուց յետոյ՝ բերանները փոխել էին։ Վերջապէս հասաւ այն օրը, որ պիտի ապացուցէին, թէ որքան ուղիղ էին իրանց խոստումները․ այդ օրը յուլիսի 28-ն էր․ այս իսկ պատճառով շատ մեծ բազմութիւն էր հաւաքվել ընտրութեան հետևանքներն իմանալու համար։ Դրվեցին քուէատուփերը․ մասնակցում էին 50 ընտրող։ 44 ձայնով վերընտրվեց նոյն քաղաքագլուխը, ձայների ահագին առաւելութեամբ վերընտրվեց և նոյն պրէզիդիումը անփոփոխ…

Եւ այսպէս՝ առաջիկայ քառամեակում պիտի շարունակէ իր գործունէութիւնը քաղաքագլուխ իշխան Անդրօնիկօվը իր սովորական պաշտօնակիցներով և ծառայակիցներով։ M. M.

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻՑ

V

Գորիս, 25 յուլիսի

Ամառն է․ արդէն գաւառումս սկսված է հունձը։ Զմեռվայ ցրտերի հետևանքը նկատելի է այժմեան բերքի վերաբերմամբ։

Այն բերքի վարելահողերը, որոնք առատ բերք էին տալիս, այժմ շատ նուազ բերք ունեն։ Այդպէս են Խնձորեսկի ցածր վարելահողերը, Կոռնձոր և Տեղ գիւղերի բերրի դաշտերը, որոնք գաւառիս Շիրակն են եղել։ Մի շարք փոքր գիւղեր շատ պակաս բերք կունենան։ Սիսիանում ցորենը ծախվում է պուդը 1 ր․ 50 կ․, գարին 70—80 կ․, իսկ Գորիսի շուկայում՝ ցորենը 1 ր․ 80 կ․, գարին 1 ր․։

Եւ այսպիսով Զանգեզուրի բնիկ ժողովուրդը հողի հետ ունեցած իր չարչարանքներից և նեղութիւններից յետոյ՝ մօտիկ աշնան դարձեալ կարիք է ունենալու աչք ուղղել Նախիջևանի և Ղարաբաղի ցորեններին, որոնց մեծ քանակութեամբ տեղափոխելն էլ մի պատուհաս է հանդիսանում։ Սաստիկ և երկարատև ձմրան յետևից եկաւ երաշտ ամառ, որը որոշ չափով ազդեց նաև խոտերի վրա․ հարկաւոր և ժամանակին անձրևները չեկան և խոտհարը սպասված արդիւնքը չը տուեց․ իւղը և պանիրը շատ թանգ են․ Գորիսում, ուր համեմատաբար անասնապահութիւնը շատ է տարածված, իւղի պուդը ծախվում է 16 ր․, իսկ պանիրը 7 ր․—7 ր․ 50 կ։

Բաղերը և այգիները ունեն միջակ բերք․ Թութը չը նայելով որ լաւ և առատ է, բայց օղի քիչ է ստացվում։ Այգիներում տանձ, խնձոր քիչ են։

Գաւառումս տարածված է անասունների մէջ դաբաղ կոչված հիւանդութիւնը․ Գորիսում, ուր նստում են մի շարք անասնաբոյժներ, եռանդուն միջոցներ են ձեռք առել յիշեալ հիւանդութեան դէմ մաքառելու։ Սիսիանի մի շարք գիւղերում նոյնպէս տարածված է դաբաղը։ Եղանակները շոգ են, Գորիսը, որ հարուստ է իր սառն ջրերով, իր աղբիւրներով, ամեն տուն ունի իր առաջ պարտէզ, այնուամենայնիւ իր տաքութեամբ օրվայ որոշ ժամերին Բագուն է յիշեցնում․ սակայն երեկոները և գիշերները զով և հրաշալի են։ Մեր միակ բաւականութիւնը այս ամառ Թիֆլիսի «Նոր-Դրամա» ընկերութեան դերասանների մի շարք ներկայացումներն են, որոնք կը տևեն մինչև ամսիս վերջը։

Շուտով Գորիսը հեռագրաթելով կը միանայ Ղափանի հետ․ աշխատանքները վերջանալու վրա են, և մինչև 10—15 օրը հեռագրաթելը կը գործի․ այս հանգամանքը ևս գաւառիս համար մի ուրախալի երևոյթ է, որով հանքերով հարուստ Ղափանը հաղորդակցութեան աւելի հեշտ միջոց կունենայ։ Սազանդարեան

ՆԱՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Բալախանի, 20 յուլիսի

Նաւթային աշխարհի՝ Բալախանու շրջանում, ուր հազարաւոր ամուրի և ամուսնացած հայեր կան, ապրողներ, իրենց կանանց ու ծնողների հետ, հոգեկան ճգնաժամի մէջ են գտնվում։

Որպէսզի պարզ լինի ընթերցողների համար, պիտի ասեմ, որ եթէ Շամախու կօնսիստորիան ու հոգևոր կառավարութիւնը այդպէս անտարբեր մնալու լինեն, ինչպէս անցեալում է եղել և են այժմ, Բալախանու ոստիկանատունը լցված կը տեսնենք բազմաթիւ ղեռատի հայ կանանցով և 2—5 տարեկան երեխաներով։

Բագուի քաղաքապետութեան շրջանում վաղուց կարգադրված է, որ ամուսնացած մարդկանց, կանանց և երեխաների անունները օրինաւոր կերպով պիտի մտցվեն անցագրերի մէջ և անցագրերն էլ պիտի ցուցակագրվեն ոստիկանատների մատեանների մէջ։

«Օրինաւոր կերպով» այնպէս պէտք է հասկանալ, որ պսակակատար քահանները պիտի մտցնեն կանանց և երեխաների անունները, իսկ գործակալները գործակալական կնիքով պիտի վաւերացնեն։

Սակայն Բալախանու շրջանը այնքան է աչքաթող արված Շամախու կօնսիստորիայից, որ վերջին 2—3 տարվայ ընթացքում ոչ պսակվածների անունները կան մատեաններում, ոչ էլ ծնված-մկրտված երեխաների անունները չափարերականի մէջ։

Արդ, ինչի՞ցն է առաջացել այդ քաօսային դրութիւնը մեզանում։

Ահա թէ ինչից։

Երբ Շամախու կօնսիստորիան և տեղիս գործակալութիւնը անխնայ կերպով հալածանք սկսեցին Բալախանու ծխատէր քահ․ Տէր-Ոսկանեանի դէմ և մերթ ընդ մերթ դադարեցրին քահանայագործութիւնից, Տէր-Ոսկանեան քահանան էլ մերթ ընդ մերթ դիմում էր Էջմիածին, որը քանդում էր կօնսիստորիայի վճիռը՝ նորից իրաւունք տալով քահանայագործութեան։ Եւ այդպէս՝ կօնսիստորիայի որոշումը Էջմիածինն էր քանդում, Էջմիածնի որոշում-հրամանը՝ գործակալութիւնը, վերջինիս վճիռը՝ կօնսիստորիան անվերջ։ Այդ տխուր երևոյթը, իրար հակասող որոշումները տեսնելով, Տէր-Ոսկանեանն էլ աշկարա կամ ծածուկ պաշտօնավարում էր թէ պսակներ կատարելով, թէ մկրտութիւններ անելով և թէ ննջեցեալներ թաղելով։

Տեղիս եկեղեցիների գործակալութիւնը Տէր-Ոսկանեան քահանայի «պատժելու» համար պսակվողների, մկրտվողների և թաղվողների անունները չէր ներմուծում պաշտօնական մատեանների մէջ, իսկ ծխականները այդ բանից տեղեկութիւններ չունենալով՝ մտածում էին, որ իրանք օրինաւոր շաւղի մէջ են գտնվում։

Սկզբից մարդիկ չը գիտէին, բայց այժմս է ամեն ինչ լոյս ընկել, հրապարակ բերելով իրերի այլանդակ պատկերը։

Թող փաստերը խօսեն։

Մի հայ, աչքի ընկնող պաշտօնեայ Բալախանու նաւթահանքերից մէկում, Մ․ Ս․-նցը, որի կինը տարիներ առաջ վախճանվել է, ամբողջ տարիներ անցնելուց յետոյ՝ վճռում է ամուսնանալ, սակայն ամեն ինչ պատրաստելուց յետոյ, երբ դիմում է գործակալին հրաման ստանալու, նրան պատասխանում են, որ նա իրաւունք չունի երկու կին առնելու… Ս․-նցը բացատրում է, որ իր կինը վախճանվել է, նրա թաղողը այն-ինչ քահանան է, հարիւրաւոր վկաներ կան և այլն, բայց հոգևոր իշխանութիւնը իր գրքերի մէջ չը տեսնելով թաղման մասին տեղեկութիւններ՝ հազիւ հազ թոյլատրում է երկրորդ պսակը։ Մենք հաւատացած ենք, որ եթէ այդ պարոնը դիրք ունեցող չը լինէր, նրա ամբողջ ծախսը ցեխի հետ պիտի հաւասարվէր։

Մի ուրիշ պարոն, Պ․․նց ազգանունով, 1909 թ․ փետրվարի 6-ին ամուսնանում է, բայց ահա երկու տարի է, ինչ չէ կարողանում ոստիկանութեան խիստ պահանջը կատարել և կնոջ անունը անցագրի մէջ մտցնել։ Քանիցս անգամ դիմել, խնդրել է գործակալութեան, բայց վերջինս վճռական կերպով մերժում է, թէ «քո օրինաւոր կինը լինելուն մենք տեղեկութիւն չունենք»…

— Ես ս․ Լուսաւորիչ եկեղեցումն եմ պսակվել, ես լուսագին եմ տուել, ես…ես… աղաչում եմ—և այն ասելով չէ կարողանում շարժել հոգևոր ներկայացուցիչների գութը։

Լ․ Ս․-նցի երեխան մկրտվել է, կնքահայր, քահանայ, տիրացու, հասարակութիւն, բալորը, բոլորը գիտեն, բայց անունը մատեանում չը կայ։ Ծննդական է հարկաւոր, չէ կարողանում ստանալ, դրամ է ուղարկում կօնսիստորիա, դրամն էլ յետ չեն տալիս…

Փաստեր, ապացոյցներ շատ կան, մենք բաւականացանք իւրաքանչիւրից մի-մի դէպք յիշել միայն, բայց երբ ոստիկանութիւնը, ուսումնարանների վարչութիւնը կը դիմեն օրինական միջոցների, այն ժամանակ չը գիտենք ինչպիսի՛ տխուր հետևանքներ կը ստեղծվեն։

Սակայն միթէ սոսկ սրանք են…

Ս․ Գարագաշ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿ․ ԽԱՆՈՒԹԸ ԳԱՆՁԱ ԳԻՒՂՈՒՄ

Ախալքալաք, 25 յուլիսի

Գանձան իր առևտրական ասպարէզում եղել է մի կայան, որտեղ մենակ վերջին տասը տարիների ընթացքում իրանց չնչին դրամագլխով, այն է՝ 200—300 րուբլով, կարողացել են հարստանալ և հազարների տէր դառնալ հինգ թէ վեց խանութպաններ․ կարծեմ մէկ թէ երկու «անշնորհքների» չէ աջողվել այդ, և այդ պատճառով նրանք ընդ միշտ վերջ են տուել իրանց գործին։ Այսօր մենք մեր խանութպաններին տեսնում ենք և՛ իբրև խանութպաններ, և՛ իբրև հազարներով պանրի գործ կատարողներ, և՛ կապալառուներ և այլ գործով զբաղվողներ։

Այո՛, միայն 200—300 րուբլով, մենակ տասը տարվայ ընթացքում դառնալ 5—7000-ի տէր՝ բաւական զարմանալի երևոյթ է․ և ահա այդ պատճառով խանութպանութիւնը մեր գիւղում դարձաւ մի հիւանդութիւն, ու խանութները սկսեցին բազմանալ այնպէս, ինչպէս սունկը անձրևից յետոյ։ Բայց աւաղ… Ապրանք սպառող ժողովուրդը, այն ժողովուրդը, որի քրտինքի կաթիլներով մեր խանութպանները կարողացել են դիզել հազարներ և նախանձի առարկայ դառնալ, այդ ժողովուրդը այսօր հասկանալով խանութպանների հարստանալու պարզ սիստեմը՝ սթափվել է, և, շնորհիւ մի քանի բարեյաջող հանգամանքների, այս տարվայ ապրիլին Գանձայում ծնունդ է առնում Գանձայի Սպառողական Ընկերութիւնը, որին գլխաւորապէս մասնակցում են Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան անդամները, որոնք և բաց են անում սպառողական խանութ։

Սպառողական Ընկերութիւնը ներկայիս իր բոլոր ոյժերը կենտրօնացրել է խանութի վրա․ նա ունի ընտրված վարչութիւն, խանութի կառավարիչ և 2 գործակատար։ Ընկերութիւնը արդէն ձեռնարկել է խանութի համար յարմար շինութեան կառուցման, անդամակցում է Սպառողական Ընկերութիւնների Մօսկվայի Միութեանը և նպատակ ունի ապագային ապրանքների մի մասը բերել տալ Մօսկվայից։ Ընդհանրապէս Ընկերութեան գործերը գնում են շատ աջող կերպով։ Նա, որ իր բացման օրը, որից անցել է ընդամենը երեք ամիս, ունէր 8 անդամ, այսօր ունի արդէն 30 անդամ․ դրամագլխի այն շրջանառութիւնը (2000 ր․), որ Ընկերութիւնը սպասում էր ամբողջ տարվայ ընթացքում, արդէն եղել է երեք ամսվայ մէջ։ Խանութը ներկայիս ունի 42 գրքոյկով (по книжкѣ) մշտական առևտուր անողներ, որոնք օր ըստ օրէ աւելանում են շնորհիւ այն հանգամանքի, որ Ընկերութիւնը ապրանքը բաց է թողնում սովորականից ցածր գնով և, որ գլխաւորն է, լաւ յատկութեան։ Սպառողական Ընկերութեան խանութի մէջ աչքի է ընկնում գիւղերում բոլորովին բացակայող և շատ կարևոր երևոյթ—այն է դեղատնային մասը (аптекарская часть)։

Ի հարկէ, իբրև ընդհանուր օրէնք, խանութը իր բացման օրից ունեցել է և ունի շատ հակառակորդներ, որոնք գլխաւորապէս բաղկացած են խանութպաններից և նրանց արբանեակներից։ Որպէս մրցողներ ներկայիս նրանք ևս էժանացրել են ապրանքի գները, բայց այս բանը այնքան աչք է ծակում, որ ամբողջ գիւղացիութիւնը այսօր համոզված է և ասում է, որ «այդ անում են հասարակական խանութը փակելու մտքով, իսկ երբ աջողվի այդ, այն ժամանակ նրանք մէկին երկուս կը հանեն»։

Թողնելով այս, պէտք է խոստովանվել, որ մարդ լցվում է գոհունակութեան զգացմունքով, երբ տեսնում է, թէ ինչպէս Ընկերութեան անդամները, թէ գրագէտ և թէ անգրագէտ, աշխատասէր մեղուի նման ամենը մի բան ներս են բերում, լրացնում են խանութի մի որևէ պակասութիւնը և այլն։

Իբրև ականատես, պէտք է ասեմ, որ գնահատելի և շնորհակալութեան արժանի է Ն․ Տէր-Գրիգորեանը իր անխոնջ և եռանդուն աշխատանքով Ընկերութեան բացման և ներկայ աջող առաջադիմութեան մէջ։

Ցանկալի է, որ Գանձայի Սպառողական Ընկերութիւնը օրինակ ծառայէր շրջանիս միւս հայ գիւղերին։ Արտաւր

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—o—

ԸՆՏՐՎԵԼԻՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑՈՒՆ

II*)

Շատերը օրինակ են բերում Ամերիկայի նախագահական ընտրութիւնները, որոնք ըստ իս, նոյնպէս բռնի և ճնշող բնոյթ ունեն, որովհետև քանի տասնեակ միլիօններ են ծախսում այդ նպատակի համար, և շատ անգամ ընտրելիներից ամենաարժանաւորը սևանում է։ Ամերիկայի ընտրութիւնը քաղաքական բնաւորութիւն ունի․ մէկի ընտրվելով իր մարդկանց համար տեղեր են բաց լինում, ներքին և արտաքին քաղաքականութեան մէջ ահագին փոփոխութիւններ են մտցվում, որ պատահում է շատ անգամ կործանարար, մինչև որ ապագայ ընտրութիւնը գայ և այդ սխալ քայլն ուղղի։ Բայց այսպիսի ընտրութիւնները մեր ընտրութիւնների հետ չէ կարելի համեմատել։ Նրանք ունեն որոշ քաղաքական ուղղութիւններ և անկախ կառավարութիւն․ և եթէ մի հարցում նախագահը սխալվեց գիտութեամբ կամ անգիտութեամբ, այդ սխալը կուղղվի որոշ ժամանակից, այսինքն չորս տարուց, որովհետև նախագահական ժամանակամիջոցը տևում է չորս տարի։ Մեր սխալը պիտի տևի մինչև կաթողիկոսի մահը, և մենք անկախ կառավարութիւն չունենք, որ մի գոյն կարելի լինէր տալ այդ արված սխալին։

Մեր և Ամերիկայի ընտրութիւնների միջև աչքի ընկնող զանազանութիւններից մէկն էլ այն է, որ ամերիկացիք ոչ առաջ, ոչ ընտրելու ժամանակ երբէք չեն անուանարկի հակառակորդի կանդիդատին։ Մենք այնքան ստոր ենք այս բանում, որ կրիտիկայի չէ կարելի ենթարկել։ Երևակայեցէք, որ ընտրվում է այնպիսի մի կաթողիկոս, որ մի կուսակցութիւն արդէն կեղտոտել է նրան․ նա կամ չը պէտք է ընտրվէր և կամ ի՞նչ յարգանքով պիտի վերաբերվեն դէպի նա։ Բայց մենք աւելի հեռու ենք գնում․ մինչև անգամ ընտրվելուց յետոյ էլ շարունակում ենք այնպիսի մի անպատկառ ընթացք բռնել դէպի մեծամասնութեամբ ընտրվածը, որ ոչ մի քաղաքակրթված ազգի մէջ, մինչև անգամ տգէտ ազգի մէջ այդ չէք տեսնի։

Վերջապէս ընտրելու ժամանակը մօտենում է․ կազմեցէք մի ցուցակ բոլոր եպիսկոպոսների և արքեպիսկոպոսների՝ առաջուց ձեռք բերելով նրանց գործելակերպը, profession de foi-ն։ Միթէ մեր բոլոր կուսակցութիւնները միասին գործելով չեն կարող գտնել մէկը դրանց մէջ, որ համապատասխանէր մեր յիշած համեստ և դիւրին պահանջներին։ Ես աւելի հեռու եմ գնում․ եթէ այդ էլ դժուար է, գոնէ ընտրենք այնպիսի մէկը, որ մեր եկեղեցին հանէր ստորացած դրութիւնից և պահէր իր բարձր կոչման վրա, մտցնէր դիսցիպլինա և կարգ ու կանոններ ամեն դասերում։

Մի մարդ, անգամ լինի նա հանճար, եթէ աջակցութիւն չը գտնի, այդ դէպքում կը մատնվի անգործունէութեան։ Արդ՝ այդպիսի պայմաններում էլ ինչացո՞ւ են մեր սինօդականները և այն անչափ մարդիկ, որ իրանց բարի և օգտակար գործով և խորհրդով կարող էին մեծապէս նպաստել կաթողիկոսին։ Մինչև անգամ եթէ կաթողիկոսը այնպիսի մէկը լինի, որ իր ընտրողներին յուսախաբ անի իր անգործունէութեամբ, այդ դէպքում անգամ օժանդակիչ մարմինները, եթէ սրանք իրանց կոչման բարձրութեան վրա կանգնած լինեն, գործերին այնպիսի ընթացք կը տան, որ ամեն բան իր փայլուն և օգտակար դրութեան մէջ մնայ։

Ուրեմն ընտրված կաթողիկոսը, լինի նա տաղանդաւոր, հարկաւորութիւն ունի շրջապատողների աջակցութեան, մանաւանդ եթէ նա ընտրված լինի արդի պահանջներին անհամապատասխան։ Ի՞նչ աւելի փառք կարող են սպասել շրջակայ գործողները, երբ յիշած երկու հանգամանքներում էլ դրանք, աջակցելով եկեղեցին իր բարձր կոչման մէջ պահելու և Լուսաւորչի գահը՝ Էջմիածինը իր արժանաւոր դրութեան մէջ, հայ ազգի շնորհակալութեան և երախտագիտութեան կարժանանան։ Բայց երբ ընտրութիւնից յետոյ կուսակցութիւններն սկսեն շարունակել իրանց աւերիչ գործերը, ընտրվածն ինչ տեսակ արժանաւոր մարդ էլ լինի, նա պիտի անպէտքանայ։ Այն ժամանակ մընաս բարեաւ դու, հայ եկեղեցի․ թէ ռամիկ և թէ բանիբուն մարդիկ քիչ-քիչ կամաց-կամաց սառչելու են, և եթէ քաղաքական մի աննպաստ փոփոխութիւն էլ վրա հասնելու լինի, այն ժամանակ հեռուից նշմարվելու են քայքայման նշանները․ և դրա առաջն էլ չեն կարողանայ առնել․ ներկայ սերունդն իր տարիքն առած՝ սկսելու է զղջալ, մինչ նորի՝ ետևից հասնելը․ և եթէ նորն էլ իր նախորդի սկզբնական շաւղով գնայ, քայքայումն անխուսափելի է լինելու։

Բալթ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Երէկ, յուլիսի 30-ին, Ն․ Կ․ Բ․ Գահաժառանգ Ցեսարեվիչի և Մեծ Իշխան Ալէքսէյ Նիկօլայեվիչի ծննդեան օրը, Ալէքսանդրօ-Նէվսկի զինւորական տաճարում աստուածպաշտութեան կարգից յետոյ զինւորական հոգևորականութիւնը կատարեց գոհացողական մաղթանք Ն․ Կ․ Բ․ արքայութեան համար, որից յետոյ Արսենալի լեռան վրայից կատարվեց թնդանօթաձգային 21-հարուածեան ողջոյն։ Մաղթանքներ կատարվեցին նմանապէս Վանքի մայր տաճարում և օտար դաւանութիւնների աղօթատներում։

✦ Յուլիսի 28-ին Վլադիկավկազից Թիֆլիս վերադարձաւ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատար ինֆանտերիայի գեներալ Ն․ Շատիլօվը։

✦ Թիֆլիս վերադարձաւ նահանգապետ Ա․ Ջերնեավսկին, որը պաշտօնական գործերով գնացել էր գաւառները շրջագայելու։

✦ Թիֆլիս վերադարձաւ իր ճանապարհորդութիւնից պրօֆեսոր Ա․ Վօէյկօվը։ Նա ընդհանրապէս շատ գոհ է մնացել իր ճանապարհորդութիւնից և ամեն տեղ ցոյց տրված հիւրասիրութիւնից։ Մանաւանդ տպաւորիչ է եղել ընդունելութիւնը Էջմիածնում։ Պրօֆեսորը Էջմիածնից անցել է Անի, Ալէքսանդրօպօլ, այնտեղից Ախալքալաքի գաւառի դուխոբորների Գօրելովկա գիւղը, յետոյ Կարս։

✦ Մեզ հաղորդում են, որ Շամախու գաւառի Մադրասա գիւղի այգեգործները հրաւիրել են Սաղեան գիւղում գտնվող Խ․ Երիցեանին կարդալու մի շարք դասախօսութիւններ Մադրասա գիւղում։

✦ Մեզ հաղորդում են Շարուրից, որ շերամի բերքը այս տարի միջակ էր և միջակից փոքր ինչ լաւ։

✦ Ղարաքիլիսայից հաղորդում են, որ այնտեղ բակտերիօլօգիայից դասախօսութիւններ է կարդացել Պ․ Քալանթարեան։ Առաջիկայ շաբաթվայ ընթացքում սպասվում են մի քանի մասնագէտներ՝ կարդալու դասախօսութիւններ այգեգործութիւնից (Խարազեան), մեղուաբուծութիւնից (Մխիթարեան), ջրաբաշխութիւնից (Մուրադեան) և ուրիշներ։

✦ Մեզ հաղորդում են, որ վերջին օրերի անձրևները բարերար ազդեցութիւն են ունեցել լեռնային բարձրադիր շրջանների ցանքսերի վրա։ Միևնոյն ժամանակ առատօրէն ջուր են ստացել արտերը, որոնք սկսել էին չորանալ երաշտից։

✦ Յուլիսի 29-ին տեղի ունեցաւ ընտրողների ցուցակները ստուգող Թիֆլիսի դումայական մասնաժողովի նիստի շարունակութիւնը, երբ քննութեան առնվեցին քաղաքային ընտրողների չորրորդ մասի ցուցակները։ Հինգերորդ քաղաքամասի ցուցակները քննութեան առնվեցին յուլիսի 30-ին, ցերեկով և երեկոյեան։ Այժմս քաղաքային տանը ցուցադրված են 1-ին, 2-րդ և 3-րդ քաղաքամասերի ցուցակները, իսկ միւսները կը ցուցադրվեն շարունակաբար։

✦ Բաթումի քաղաքագլուխ է ընտրված իշ․ Իվան Զախարեվիչ Անդրօնիկօվը, իսկ քաղաքային վարչութեան անդամ՝ Կրինիցկին և քարտուղար՝ Մեսխին։

✦ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատարը անհրաժեշտ գտաւ հեռացնել Բաթումի քաղաքային դումայի իրաւասուների կազմից իրաւասուներ՝ Գ․ Սօղօրօվին, Ե․ Բերձենիշվիլիին, Ա․ Դեկանօզօվին և Գ․ Էլիավային, նրանց տեղ նշանակելով փոխ-ձայնաւորներ՝ Վ․ Ռուխաձէին, Ս․ Գուրգենիձէին, Ն․ Սայիֆօվին և Ի․ Կախիանիին։

✦ Մայկօպի նաւթահանքերի թոյլ արդիւնաբերութիւնը և բազմաթիւ որոնումների անյաջող ելքը սաստիկ հիասթափութիւն է պատճառել ձեռնարկողներին։ Նաւթային երակների դասաւորութիւնը մինչև այժմ պարզված չէ այնպիսի որոշութեամբ, որ ձեռնարկողները ճիշդ գաղափար ունենան նաւթաշրջանի որակութեան և ապագայի սպասելիքների մասին։

✦ Ֆիլօքսերայի դէմ կռւելու համար որոշված է համազեմստվային գումարներից այդ գործին յատկացնել տարեկան 20,000 րուբլի։

✦ Աւարտվեցին Կուր գետի վրա կառուցվող շարժական լողարանի աշխատանքները։ Լողարանը գտնվում է Վերայի կամուրջից վերև։

✦ Ամեն տարի օգոստոսի 1-ին ուղղափառ հոգևորականութիւնը Թիֆլիսում կատարում է կրօնական մի հանդէս, ի յիշատակ Ռուսաստանի՝ քրիստոնէութիւն ընդունելուն։ Վաղը, օգոստոսի 1-ին, նման անցեալ տարիների, Բագուի եպիսկոպոս Պիմէնը Թիֆլիսի Նիկօլայեվսկի զինւորական տաճարում կը կատարէ աստուածպաշտութեան կարգ, որից յետոյ Ալէքսանդրեան այգում գտնված աւազանի մէջ կը կատարվի ջրի օրհնութեան հանդէս, որտեղ կառուցված է յորդանան։

✦ Վրաց բանասէր Մ․ Ջանաշվիլին մտադիր է վրացերէն-ռուսերէն բառարան հրատարակել։ Նա արդէն հաւաքած ունի 30,000 բառ, որի վերջնական աշխատանքները կաւարտէ աշնանը, այնպէս որ աշխատանքը տպագրութեան կը յանձնվի դեկտեմբերին։

✦ Մօտ օրերս Նիկօլայեվսկի բանտում վախճանվել է քաղաքական յանցաւոր Սիմօն Թավարթքիլաձէն, որը դատապարտված էր 4 տարվայ տաժանակիր աշխատանքների Ռ․ Ս․-Դ․ Բանւորական Կուսակցութեանը պատկանելու համար։ Հանգուցեալը թողել է ծերունի ծնողներ, կին և 3-ամեայ աղջիկ։

✦ Հացթուխների աւագ Տ․ Տիտուխեանը խնդրել է Թիֆլիսի նահանգապետից, համաձայն հացթուխների միջնորդութեան, հացի փութին աւելացնել կէս կօպէկ, ի նկատի ունենալով որ ալիւրի գները բարձրացել են։ Այս խնդիրը նահանգապետը ուղարկել է քաղաքային վարչութեանը, քննելու մօտ օրերս։

✦ Վրաց Պատմա-Ազգագրական Ընկերութեան նախագահ Ս․ Ս․ Թաղայշվիլին և նոյն ընկերութեան գանձապահ Ա․ Ի․ Սաբաշխվելին այս օրերս կը ճանապարհվեն դէպի Կախէթ՝ հնագիտական ուսումնասիրութիւններ կատարելու նպատակով։

---

*) Տես «Մշակ» № 163.

◆ Հնագէտ Ե. Թաղայշվիլիի Գօրու գաւառից բերված թնդանօթը, որը վրաց Թէյմուրազ արքայի ժամանակներից է մնացած, ընկերութեանը նուիրել է իշխ. Վ. Մաչաբելին։ Թնդանօթը 18 պուդ է կշռում։

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը թոյլ է տուել առաջիկայ տարվայ յունվարի 2—5-ը Խարկովում գումարել ատամնաբոյժների համագումար։

◆ Քութայիսում գիմնազիստ Քամարօվի յափշտակութեան գործի առիթով մեղադրըվողներին արդէն յանձնվել է մեղադրական թուղթը։ Գործը կը քննվի սեպտեմբերին Թիֆլիսի զինուորա-նահանգական ատեանում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

Դիլիջան, 24 յուլիսի

Ուրբաթ, յուլիսի 22-ին, տեղիս բօտօնդի սրահում կայացաւ դերասան Անդրանիկի բենեֆիսը, Գ. Միրզոեանի և սիրողների մասնակցութեամբ։ Անդրանիկը ընտրել էր «Ոճրագործի ընտանիքը» դրաման։

Խաղը ընդհանրապէս թոյլ անցաւ, բայց և այնպէս հանդիսականները բենեֆիցեանտին վարձատրեցին ծափահարութիւններով և մատուցին երկու ծաղկեփունջ։

Հետևեալ հերթական ներկայացմանը խաղալու են Շիրվանզադէի «Պատւի համար» պիէսը՝ Յ. Աբէլեանի մասնակցութեամբ։

Շաբաթ, յուլիսի 23-ին, նոյն սրահում տեղի ունեցաւ համերգ՝ Ներսիսեան դպրոցի երաժշտութեան ուսուցիչ Սպ. Մելիքեանի ղեկավարութեամբ։

Համերգը բաղկացած էր երկու մասից։

Առաջին մասում երգեցին բազմաթիւ խմբական երգեր և սօլօներ, որոնցից աջող էին «Զիգ տու քաշի», «Դէհ գընգը-գընգը», «Осень» Մենդելսոնի, «Подвигъ» Չայկովսկիի։ Վերջինս երգեց Սպ. Մելիքեանը աջող կերպով։ Սօլօներից բաւական լաւ էր նաև Թիֆլիսի Խուդադեան որբանոցի որբուհիներից՝ օր. Սիրանոյշի երգած «Հով արէք-ը». օրիորդն ունի շատ քաղցր և դուրեկան ձայն։

Երկրորդ բաժնում՝ շատ լաւ երգեցին Շուբէրտի «Wanderer»-ը (Սպ. Մելիքեան), «Օրօրոցի երգը» Մօցարտի, «Կալի երգը» և այլն։ «Տէր կեցո», «Լուսնակը սարի տակին», «Քիշէր ցոլեր», «Пѣснь о Вилвѣ» (Լէարի), և «Իմ չինարի եարը» բաւարար էին։ Ընդհանրապէս, ի նկատի առնելով կարճ ժամանակամիջոցը, կարելի է համերգը աջող համարել։

Դահլիճը լիքն էր երկսեռ բազմութեամբ, որը Սպ. Մելիքեանին և երգիչներին վարձատրեց բուռն ծափահարութեամբ։

Ցանկալի էր այդպիսի համերգներ յաճախ լսել, որովհետև պարբերկոյթներն արդէն ձանձրալի են դարձել իրանց միօրինակութեամբ։ Լէւոմաս

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յարութիւն Թումանեան. «Հայոց աշխարհաբար լեզուի համառօտ համաձայնութիւն»։ Գործնական վարժութիւններով և քերականական խնդիրներով։ Ստորին և միջին դպրոցների համար։ Թիֆլիս, 1911 թ., գինն է 40 կոպէկ։

Վերոյիշեալ ձեռնարկը տալիս է հայոց լեզուի քերականութեան երկրորդ մասի՝ Համաձայնութեան լրիւ և ամփոփ դասընթացքը, սկսած բառերի համաձայնութիւնից մինչև պարբերութիւններն ու դրանց տեսակները։ Դասագրքի լեզուն դիւրըմբռնելի է և քերականական իւրաքանչիւր կանօնի բացատրութիւնից յետոյ տրվում են աջող օրինակներ մեր գրողների գրուածքներից։

Այս ձեռնարկը կարող է ծառայել իբրև օժանդակիչ միջոց ձեռնհաս ուսուցչի համար հայոց լեզուի դասաւանդութեան ժամանակ։ Թէ դասերին անցած նիւթի և թէ այս դասագրքի մէջ եղած օրինակ-վարժութիւնների ու խնդիրների գործնական գրաւոր և բանաւոր զբաղմունքի ժամանակ յիշեալ ձեռնարկը կարող է աշակերտի համար ծառայել իբրև մի ուղեցոյց, իբրև աղբիւր, որը ձեռքի տակ ունենալով՝ աշակերտը հարկ եղած դէպքում կը գտնէ իրան հարկաւոր բացատրութիւնները։ Ձեռնարկի նիւթի մշակումն և դասաւորութիւնը կատարված է ռուսական լաւագոյն դասագրքերի նման։ Այս ձեռնարկը գործադրելի կարող է լինել թէ պետական և թէ մեր ծխական դպրոցներում, որ կենդանի լեզուն դասաւանդելիս քերականութեան ուսումը երկրորդական տեղ պէտք է բռնէ և քերականութեան ձեռնարկները պիտի կատարեն այն, ինչ որ բառարանները, այսինքն լոկ օժանդակիչ և ձեռքի տակ եղող մի միջոց, ուզած ժամանակ նրա մէջ որոնելու և յիշելու այս կամ այն քերականական կանոնը։

Ա. Ն.

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Առանց դաւանանքի, Հէնրիկ Սենկեվիչի, Թարգմ. լեհերէնից Տ. Յովհաննիսեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 289, գ. 1 ր. 50 կ.։ 2) Մի գիւղացու պատմութիւն, Էրկման Շատրիանի, Թարգմ. Վ. Փափազեանի, պատկերազարդ, I և II մաս, Թիֆլիս, 1911 թ., էջ 408. 3) Խղճի խայթը, Արմանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 40, գ. 25 կ.։ 4) Օհանի ընտանիքը, Գ. Տանձկերտեանի, Բագու, 1911 թ., էջ 11, գ. 5 կ.։ 6) Դաշտենի քուէարկութեամբ ընտրվածը, Գ. Տանձկերտեանի, Բագու, 1911 թ., էջ 16, գ. 5 կ.։ 6) Զարի, պօէմա, Գ. Մեսեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 48, գ. 25 կ.։ 7) Пятна крови и другіе разсказы, Вртанеса Папазяна, пер. съ арм. Н. Багатуровой, Իւրիյ Վեսելօվսկիյի առաջաբանով, Մոսկվա, 1911 թ., էջ 99, գ. 10 կ.։ 8) Родство грузинъ съ испанцами по древнимъ источникамъ, Л. М. Меликсетъ-Бекова, Թիֆլիս, 1911 թ., էջ 38, գ. 25 կ.։ 9) Полный армяно-русскій словарь, կազմեց Ե. Դաղբաշեան, Թիֆլիս, 1911 թ., էջ 278+XV, գ. 6 ր.։ 10) Բազմավէպ ամսագրի № 6-ը (յունիս), Վենետիկ, 1911 թ.։ 11) Մարմնամարզ ամսագրի № 5-ը (յունիս), Կ. Պոլիս, 1911 թ.։ 12) Armenia անգլիերէն ամսագրի յունիսի №-ը, 1911 թ., Նիւ-Եօրկ։ 13) Շանթ պատկերազարդ կիսամսեայ հանդէսի № 2-ը (1 յուլիս), Կ. Պոլիս, 1911 թ.։ 14) Արազած պատկերազարդ շաբաթաթերթի №№ 5-ը, 6-ը, 7-ը, 8-ը և 9-ը, Նիւ-Եօրկ, 1911 թ.։ 15) Հայրենի կիսամսեայ հանդէսի №№ 13-ը և 14-ը, Մարզուան, 1911 թ.։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կ. Պօլսի և Ցետինիէի միջև սկսվել են բանակցութիւններ՝ վճարելու 10,000 թիւրքական ֆունտ, որպիսի գումարը Թիւրքիան համաձայնել է վճարել Չէրնօգօրիային, մաս առ մաս։

◆ Յուլիսի 26-ին Պետերբուրգից Չէրնօգօրիա է մեկնել Նիկոլայ արքայի դեսպան գեներալ Միուշկօվիչը։ Նա իր միսիան համարում է վերջացած։

◆ Հաւաստի աղբիւրներից հաղորդում են, որ Եապօնիան Պետերբուրգ է ուղարկել մի բարձր պաշտօնէի, յոյժ կարեւոր յանձնարարութիւններով, այն է ընդարձակել 1907 թւի պայմանագիրը։

◆ Պարիզից տեղեկացնում են, որ Տուլուզում սօցիալիստների կուսակցութիւնը կազմակերպել է բողոքի միտինգ պատերազմի դէմ, մարօկկեան բարդութիւնների առիթով։ Սպանիայից եկած սօցիալիստների պարագլուխ Պաբլօ Իգլեզիասը արտասանել է մի խիստ ուժեղ ճառ, որով յայտնել է, որ սպանական ժողովուրդը աւելի շուտ յեղափոխութեան դրօշակ կը բարձրացնէ, քան թոյլ կը տայ պատերազմ վարել, որը «ֆինանսական աւազակների» գործ է։

◆ Ցամառ լուրեր են պտտում, որ Աւստրիայի կանցլեր Շէնայխը մօտ ապագայում հրաժարական կը տայ, որին առիթ են ծառայում այն տարաձայնութիւնները, որոնք տեղի են ունեցել նրա և Ֆրանց-Ֆերդինանդի միջև։ Պատճառը համարվում է այն, որ Շէնայխը մատնանշել է այն անհրաժեշտութեան վրա, որը վերաբերում է մաջարներին ազգային զիջումներ անելուն, զինուորական բարենորոգումներ մտցնելու առիթով։

◆ Վօրօնեժի նահանգի Բօգուչարսկի գաւառի Եասինօվկա աւանում հանդիսաւորապէս բացվել է Ազատարար-Թագաւորի արձանը, որը կառուցվել է գիւղացիների հաշւով։

◆ Ռիգայում վարչական կարգով դադարեցվել է լատիշական «Լատվեշու Բալսս» թերթը, վնասակար ուղղութեան պատճառով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

29 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կովկասեան զինուորական շրջանի փոքրահասակ զինուորացուները, թւով 120 հոգի, Պետրոս-Պօղոս տաճարում հոգեհանգիստ կատարել տուին Կովկասի նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլայեվիչի և Մեծ Իշխան աւագ Նիկօլայ Նիկօլայեվիչի դամբարանների վրա։

Մինիստրների խորհուրդը իրաւունք տուեց զինուորական մինիստրին՝ օրէնսդրական կարգով 70,000 րուբլի խնդրել 1912 թ. թռչող գործիքների մրցում նշանակելու համար։

ՇԱՆԽԱՅ։ Չինական լրագիրների տեղեկութիւնների համաձայն, Չինական Թուրքեստանի նահանգապետը միջնորդում է բանալ Թուրքեստանում բանկի բաժանմունք և մտցնել նոր դրամներ օտարազգիներից՝ դրամի շուկան ազատելու նպատակով։

ՄԻՆՍԿ։ Բօբրիսօվը այրվում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Արևահարութիւնից մեռաւ մի կին։

Որոշված է Սև ծովի նաւատորմի համար երկու դրեդնօուտի կառուցումը պատւիրել արքունի գործարաններին, մինի կառուցումը՝ Նիկօլայեվի գործարանին, իսկ ականանաւերի կառուցումը պատւիրել մրցանակ նշանակելով գործարանների միջև։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Եկաւ ճան. հաղ. մինիստրը։

ՍՊԼԵՑԻԱ։ Թագաւորի ներկայութեամբ ջուր իջեցրին երկրորդ դրեդնօուտը։

ՇԱՆԽԱՅ։ Երևան հանվեցին ժանտախտի չորս նոր դէպքեր։ Ձեռք են առնված հակաժանտախտային միջոցներ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ
ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ
Առ. և Ա. Մ.
„ՆԱՐԶԱՆ" || „ԷՍՍԷՆՏՈՒԿԻ № 20."
Պահանջեցէք ամենուրեք!
ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ (աղի-ալկալեան) №№ 4, 4 նոր, 6, 17, 18, 18 բիւվ. 2, 19, ԲԱՏԱԼԻՆԵԱՆ (անփոխարինելի լուծողական)։ ՍՄԻՐՆՕՎԵԱՆ-ԵՐԿԱԹԱՅԻՆ (պարունակում է մկնդեղ)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԼԷՊԵՇԿԱՆԵՐ (վերացնում է տապը)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԱՂ (փոխարինում է № 17 ջրին)։
ՋՐԵՐԻ ԵՒ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԻՆ—ТИФЛИСЪ, Гановская №№ 8 և 10
Գլխաւոր պահեստը Վարչութեան կից՝ Պեատիգօրսկում։ Պրէյս-կուրանները ձրի։
Դիմել՝ Пятигорскъ, Управленіе водъ.
(Կ.) 401. 19—15

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելեամինօվսկայա փողոց, № 8.
(Կ. Հ.) 416. 100—27

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս եւ վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւօտեան ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեօնօվսկայա փողոց, № 16.
Տէլէֆօն № 40.
(Ե.ու.Կ.) 220. 100—55

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ
Ներքին եւ երեխաների հիւանդութիւններ
Գօլօվինսկի, 18, տ. Դօբրժանսկիի, Արք. թատրոնի հանդէպ, տէլէֆօն № 901.
Հիւանդ. ընդունելութիւնը) 10—12 ժ. առ.) 6—7 ժ. երեկ.
(Ե.Հ.Կ.) 580. 100—28

ՖԷԼԴՇԷՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
կատարում է կաշուի տակ սրսկումներ, վէրքի փաթաթումն, դեղերի քսումն, դնում է բանկաներ։ Բժշկութիւն տղամարդի սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ նեւրաստենիայի, հիմնաւոր բժշկութիւն տրիպէրի (սուսանակ), ցոյց տալով հմուտ մասնագէտ բժիշկների։ Օտարերկրեայ հիւանդներին մանրամասն խորհուրդներ և դեղեր գրաւոր կերպով։ (Ուղարկել 3 րուբլի)։ Մասսաժ, էլէկտրականութիւն, բժշկական մարմնամարզութիւն։ Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր։ Ծախվում է իր կազմած «Տղամ. եւ կանանց գաղտնի հիւանդ. բժշկարան» նկարներով և րեցեպտներով։ Գինը 50 կոպ., ճանապարհածախս՝ 15 կ.։ Հասցէն. Тифлисъ Семеновская ул. № 9.
(Կ. Հ.) 160. 50—42

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO—ՊԻԶԻԼԻՆ"
ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործածելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Ռուսական մետաղեայ արկղներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ ընթացք։
ՊԱՀԵՍՏ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների վաճառանոցում։
(Կ.) (П.12474) 0—25

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
Զանգեզուրի շրջանի ծխական երկդասեան դպրոցի համար ՈՒՍՈՒՑԻՉ և ձեռագործի, կար ու ձևի ՎԱՐԺՈՒՀԻ։
Դիմել՝ Песковская ул., домъ № 3, Акопяну. 746. 1—1

Նուխու ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ համար հարկաւոր է մի փորձառու ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ 14—18 դասով։ Առաւելութիւն տրվելու է ռուսագէտներին և ճեմարանաւարտներին։ Խնդիրների հետ պէտք է ուղարկել ուսման վկայականները։ Ցանկացողները թող իրանց պայմաններով դիմեն հոգաբարձութեան։
Հասցէ՝ Нуха, Попечительству арм. церковно-приходской школы.
(Հ.ու.Կ.) 741. 3—3

Ծախված է ԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՆԻՑ աւելի սրուակ
ԹԱՐՄՈՒԹԻՒՆ և ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ
տալիս է ամեն մի
ԿԱՆԱՑԻ ԴԷՄՔԻՆ
ԿԱԶԻՄԻ ԿՐԷՄԸ
ՄԷԹԱՄՈՐՖՕԶԱ
ԱՐՄԱՏԱՊԷՍ հեռացնում է բծիկները, բշտիկները, խալերը, պզուկները, այրուածքը և դէմքի այլ դեֆեկտները։
83445. 10—2



ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ
Իզմայլօվսկի պր., № 27.
Պարիզ 1900 թ. ՈՍԿԷ ՄԵԴԱԼՆԵՐ Նիժնի-Նօվգօրօդ 1896 թ.
ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԻՆԱՅԻ ՋՈՒՐ
Ս.-Պետերբուրգի Բժշկական Վարչութեան կողմից թոյլատրված է պատրաստել և վաճառել այդ ջուրը որպէս հակաառողջապահական ոչինչ չը պարունակող իր մէջ։
Գլխաւոր պահեստը. Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами—Тифлисъ, Баку, Батумъ.
524. 7—3

ХИМИЧЕСКАЯ
С.-ПЕТЕРБУРГСКАЯ
ЛАБОРАТОРІЯ
ЗАЯВЛЕНО ДЕПАРТАМЕНТУ ТОРГОВЛИ И МАНУФАКТУРЪ

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՍԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster. Comptoir-ում։ Նիւթերն առնվում են րէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ) ոչ պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) սղագրութիւն. 3) դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. 10—12 և եր. 4—7 ժամը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքերում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ
(Հ.ու.Կ.) 738. 0—3 Տ. ՓԻԼՕՍԵԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՖՐԷԲԷԼԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Աւանդվելիք առարկաներ. անատոմիա, մարդակազմութիւն, առողջապահութիւն, առաջին օգնութիւն հասցնումն, հոգեբանութիւն, պատմութիւն, մանկավարժութիւն, դպրոցագիտութիւն, մանկական գրականութեան քննութիւն, բնութեան տեսութիւն, հայրենագիտութիւն, Ֆրէբէլեան զբաղմունքների տեսական և գործնական եղանակ, գծագրութիւն, «լէպկա», ձեռնարուեստ՝ մէթօդիկայով, երգեցողութիւն՝ մէթօդիկայով, մարմնամարզութիւն՝ մէթօդիկայով, գործնական զբաղմունքներ ապաստարաններում, մանկապարտէզներում, սկզբնական դպրոցներում և մանկավարժական մուզէումում։
Ֆրէբէլեան դասընթացքներում ընդունվում են միջնակարգ դպրոցներ աւարտածները, որոնք տնային ուսուցչի իրաւունք ունեն ստացած կամ սկզբնական դպրոցների ուսուցիչներ են։ Այն անձերը, որոնք ուսուցչուհու կոչում չունեն, խնդրամատոյց լինելով՝ առանձնապէս կարող են ընդունվել որպէս ազատ ունկնդրուհիներ։
Խնդիրներին պէտք է կցել 1) միջնակարգ դպրոցի աւարտման վկայական, 2) մետրիկական վկայական, 3) ժողովրդ. դպրոցների վերատեսչի վկայաթուղթ՝ վարած ծառայութեան պայմանների մասին և 4) քաղաքական բարեյուսութեան վկայական։
Դասախօսութիւնները լսելու համար տարեկան վճարն է 100 րուբլի, կէս տարվանը՝ 50 րուբ.։
ԽՆԴԻՐՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒՀԻ՝ Իշխանուհի Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ յունիսի 1-ից մինչև օգոստոսի 25-ը 1911 թ.։ Միխայլովսկի պր. № 138. (Կ.) 611. 6—5

ՅԱՏՈՒԿ
ՓՈՐԱԳՐՉԱԿԱՆ-ԳՐԱՒԻՐԱՅԻՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
Վ. ՄԱՐԳՕՇԷՍԻ
Ընդունում է ամեն տեսակ փորագրչական և գրաւիւրային գործեր։ Գնում է ոսկու և արծաթի կտորտանքներ, նոյնպէս և թանգագին քարեղէններ։
Թիֆլիս, Երևանեան հրապարակ, «Кавказъ» հիւրանոցի ներքևը։
(Կ.) 282. 24—17

Утвержденные Министерств. Торговли и Промышленности
ТОРГОВАЯ ШКОЛА
СЪ ПРАВАМИ ПРАВИТЕЛЬСТВЕН. СРЕДНИХЪ УЧЕБНЫХЪ ЗАВЕДЕНІЙ
И
БУХГАЛТЕРСКІЕ КУРСЫ
ДЛЯ ЛИЦЪ ОБОЕГО ПОЛА
А. И. ТЕРЪ-КАСПАРОВА
Баку, уголъ Красноводской и Меркурьевской. Телефонъ № 10—56.
ШКОЛА и КУРСЫ даютъ полную теоретическую и практическую подготовку къ бухгалтерской и прочей дѣятельности въ торгово-промышлен. и иныхъ учрежденіяхъ.
Полный курсъ въ школѣ три года, на курсахъ 6—8 мѣсяцевъ.
Пріемъ въ младшій приготовительный и первый классы ШКОЛЫ съ 20 Августа, НА КУРСЫ съ 1 Сентября ежедневно.
Представившія свидѣтельства объ окончаніи 2-хъ классн. сельск. училищъ, 4-хъ классовъ городскихъ училищъ и перваго класса среднихъ учебныхъ заведеній принимаются въ первый классъ ШКОЛЫ безъ экзамена.
Пробныя свѣдѣнія о ШКОЛѢ и КУРСАХЪ выдаются и высылаются безплатно.
(Հ. Կ.) 709. 20—7

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.